ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

,, 03 ,, ,, հոկտեմբեր, 2020թ N 64

ք. Եղեգնաձոր

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ, ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և ՀՀ Կառավարության 2011թ-ի մարտի 3-ի <<Պետական սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի դեկտեմբերի 5-ի թիվ 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին >> թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի դրույթներով՝

Որոշում եմ՝

1. **<<Եղեգնաձորի ԲԿ >>ՓԲԸ**

2019թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 2244900 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 1122450 ՀՀ դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2020թ-ի հոկտեմբերի 1-ը:

2. **<<Վայքի ԲՄ >> ՓԲԸ**

2019թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 157800 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 78900 ՀՀ դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2020թ-ի հոկտեմբերի 1-ը:

3. **<<Ջերմուկի ԱԿ >>ՓԲԸ**

2019թ-ի տնտեսական գործունեության արդյունքով զուտ շահույթը կազմում է 296000 ՀՀ դրամ: ՀՀ Պետական բյուջե վճարման շահաբաժնի չափը սահմանել զուտ շահույթի 50 տոկոսի չափով, որը կազմում է 148000 ՀՀ դրամ և ենթակա է վճարման ՀՀ Պետական բյուջե մինչև 2020թ-ի հոկտեմբերի 1-ը:

7/3/2020

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ